## ԱԿԱՆԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՂՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

*Լրացավ ճանաչված տնտեսագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Միքայելի Սուվարյանի ծննդյան 70-ամյակը:*

*Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. մայիսի 25-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1960 թ. այդ շրջանի Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ, որն ավարտել է գերազանցությամբ և ընդունվել ասպիրանտուրա: 1968 թ. այն ավարտելով, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի աճի հարաբերակցությունը մեքենաշինության մեջ» թեմայով:*

*1968 թ. նոյեմբերից սկսվում է Յու. Սուվարյանի մանկավարժական գործունեությունը տնտեսագիտական կադրերի պատրաստման ուղղությամբ, երբ նա աշխատանքի է անցնում ԵՊՀ ժողտնտպլանավորման և ճյուղային էկոնոմիկաների ամբիոնում նախ որպես ասիստենտ, այնուհետև ավագ դասախոս և դոցենտ: 1975 թ. Երևանի ժողովրդական տնտեսության (ներկայիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) կազմավորումից հետո նա զբաղեցրել է այդ բուհում դոցենտի պաշտոն՝ տրվելով արդիական գիտական որոնումներին: Դրանք տվեցին ակնկալվող արդյունքը, երբ նա պաշտպանեց իր դոկտորական ատենախոսությունը աշխատանքի արտադրողականության և արդյունաբերության մեջ մեթոդաբանության ու կառավարման հիմնահարցերի ոլորտում՝ «Ամբողջական աշխատանքի արտադրողականությունը ՀԽՍՀ արդյունաբերությունում. Մեթոդաբանության և կառավարման հարցեր» թեմայով: 1984 թ., արդեն պրոֆեսորի գիտական կոչումով, Յու. Սուվարյանն իր արդյունավետ գիտական գործունեությունն է իրականացրել Երևանի ժողտնտեսության ինստիտուտում՝ ի հայտ բերելով գնահատելի որակներ ոչ միայն ինքնատիպ հետազոտողի, այլև գիտակազմակերպչական աշխատանքի անդաստանում: 1987-*

*1994 թթ. նա այդ ինստիտուտում գիտական աշխատանքների գծով պրոռեկտորն էր, տնտեսագիտական գիտության աստիճաններ շնորհող խորհրդի նախագահ, իսկ 1994 թ. մայիսից մինչև այժմ գլխավորում է ՀՊՏՀ կառավարման ամբիոնը: 2006-2011 թթ. Յու. Սուվարյանը զբաղեցնում էր ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնը: Նրա ղեկավարության տարիներին բուհն անցավ արդի պահանջներին համապատասխան բարեփոխումների տևական շրջան՝ իր ուսումնակրթական ու մտավոր առաջադրումների նորովի դրսևորումներով: Գիտական և բուհական ներուժի կազմակերպչի՝ նրա կարողությունների ճանաչումը ընդլայնելու էր նաև հանրության կողմից անաչառ գնահատման սահմանները: 2006 թ. Յու. Սուվարյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 2010-ին՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: 2011 թ. հուլիսից նա ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն է: Այստեղ ցուցաբերած ավյունի և ուշագրավ նախաձեռնությունների արդյունք պետք է համարել իր ներդրումը «Հայագիտության զարգացման հայեցակարգի և «2012-2025 թթ. հայագիտության զարգացման ռազմավարության» մշակման հիմնարար ծրագրերում, ինչպես նաև հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի կազմակերպման մեջ:*

*Ակադեմիկոս Յու. Սուվարյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են իր նախասիրած գիտության ամենալայն ոլորտները, որ վկայում է նրա արդյունաշատ գիտահետազոտական աշխատանքի մասին: Նա հրատարակել է 240 գիտական աշխատություն, այդ թվում՝ 33 մենագրություն, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ: Դրանցում ամփոփված են հայրենի տնտեսագիտության վերջին նվաճումները արտադրության արդյունավետության և ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման ու կառավարման մեթոդաբանության մշակման, ռազմավարական կառավարման կարևորագույն խնդիրների լուծման, հանրային կառավարման տեսության արդյունավետ հայեցակարգի հիմնավորման, ՀՀ վարչատարածքային նոր բաժանման պայմաններում տեղական ինքնակառավարման համակարգի մշակման, կառավարման հիմնախնդիրների զարգացման ընթացքի ու միտումների բնութագրման, հանրապետության տնտեսական զարգացման և կրթության ու գիտության փոխագդեցությունների գնահատման հայեցակարգի և այլ բնագավառներում: Յու. Սուվարյանի ղեկավարությամբ ու խմբագրությամբ հրատարակված հայերեն բուհական առաջին՝ «Մենեջմենթ» դասագիրքն իր եռակի վերահրատարակությամբ (1999, 2002, 2009 թթ.) մասնագետներն իրավամբ համարում են ժամանակակից հայ տնտեսագիտական ու մանկավարժական մտքի ուշագրավ երևույթներից մեկը:*

*Ակադեմիկոսի մի շարք աշխատություններ ուղղված են բուհական ուսուցման համակարգի բարեփոխումների գործնական նպատակին: Այդպիսիք են գործընկերների հետ նրա ներդրումները հանդիսացող՝ ձեռնարկության արդյունավետ կառավարումը և ծառայությունների ոլորտի կառավարման համակարգչային գործարար ծրագրերի մշակումն ու իրականացումը: Գործնական հույժ հետաքրքրություն հարուցող ծրագրեր են նրա ղեկավարությամբ մշակված ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը (1994 թ.), ՀՀ երկաթուղային տրանսպորտի բարեփոխումների ծրագիրը (1998), որոնք կիրառական նշանակություն ունեցան համապատասխան գործադիր ոլորտներում:*

*Մեծ և գնահատելի ավանդ ունի Յու. Սուվարյանը հանրապետության մասնագետների, ինչպես և գիտական կադրերի պատրաստման գործում, շուրջ 100*

*ասպիրանտական և դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվել նրա գիտական հմուտ ղեկավարության ներքո:*

*Ակադեմիկոս Յու. Սուվարյանը գործում է իր ներուժին համապատասխան եռանդով՝ մեր հանրապետությանը շռայլորեն տրամադրելով իր ուժերն ու կարելիությունները: Նա 1990-1994 թթ. և 2006 թ. առ այսօր ՀՊՏՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է: Տպավորիչ է նրա գործունեությունը նաև գիտական հրատարակությունների ասպարեզում: 2006-2011 թթ. նա «Բանբեր ՀՊՏՀ» հանդեսի գլխավոր խմբագիրն էր, տարիներ ի վեր անդամակցում է «Հանրային կառավարում», «Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա», «Բանբեր հայագիտության» և այլ հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդներին, ՀՀ ԳԱԱ «Գիտության աշխարհում» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալն է: Լայն ճանաչման են արժանացել նրա ներդրումները գիտական հաստատություններում. 2011 թ. նա Հայոց փիլիսոփայական ակադեմիայի իսկական անդամ է, 2012-ից՝ Հայաստանի ճարտարապետական ակադեմիայի իսկական անդամ: Յու. Սուվարյանը Արցախի պետական համալսարանի պատվավոր դոկտոր է, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի պատվավոր պրոֆեսոր: Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» (I աստիճանի) և ԼՂՀ «Մայրական երախտագիտության», «Վաչագան Բարեպաշտ» մեդալներով:*

*Եռանդաշատ և ներհուն գիտնականին առաջիկայում ևս սպասում է նրա կյանքն իմաստավորող անսպառ աշխատանքը, նորի որոնումների անհանգիստ առօրյան: Արևշատություն և հետագա արգասաբեր ընթացք մաղթենք նրան:*

***«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»***
***ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ***